



ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/116/2025

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

15 մայիսի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, մասնակցությամբ Հանձնաժողովի անդամներ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարությանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2025 թվականի մայիսի 15-ին քննելով ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ՝ Վասակ Սլավիկի Վարդանյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով առերևույթ վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/116/2025 գործը՝

ՊԱՐԶԵՑ

I. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված «Հանրային ծառայության մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների պահպանմանը հետևելու գործառույթի շրջանակում հայտնաբերված անհամապատասխանությունների հիման վրա նույն օրենքի 25-րդ հոդվածի

1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ իրականացրել է հայտարարագրերի վերլուծություն և ստուգում, որի արդյունքում արձանագրել է հետևյալը՝

ՀՀ Կենտրոնական դեպոզիտարիայից ստացված տվյալների համաձայն՝ Վասակ Վարդանյանը ձեռք է բերել «Հայէկոնոմբանկ» ԲԲ ընկերության 75 հատ հասարակ անվանական բաժնետոմսեր (ձեռքբերման հիմքը համապատասխանաբար՝ Բանկի խորհրդի 14.06.2019 թվականի թիվ 23 արձանագրության քաղվածք՝ արժեթղթերի լրացուցիչ գրանցում, գործարքից ծագող իրավունքների գրանցման ամսաթիվը՝ 26.03.2020 թվական, և 28.02.2023 թվականի նիստի թիվ 7 արձանագրության քաղվածք՝ արժեթղթերի բաժանում, գործարքից ծագող իրավունքների գրանցման ամսաթիվը՝ 02.06.2023 թվական), որոնց վերաբերյալ տվյալները հայտարարագրված չեն Վասակ Վարդանյանի՝ 2023 թվականի տարեկան հայտարարագրի՝ «Բ.3. Արժեթղթեր և բաժնային ներդրումներ» բաժնում:

1.2 Հանձնաժողովը վերը նշված տվյալի հիման վրա արձանագրել է, որ առերևույթ առկա են Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներ և 2025 թվականի ապրիլի 25-ին Վասակ Վարդանյանին հասցեագրել է թիվ 01/1752-2025 գրությունը՝ հրավիրելով գրությունը ստանալուց հետո 3-րդ աշխատանքային օրը՝ ժամը 11:00-ին վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելուն, իսկ գրությունը ստանալուց հետո 5-րդ աշխատանքային օրը ժամը՝ 15:00-ին գործի քննությանը մասնակցելու, որի վերաբերյալ Վասակ Վարդանյանը պատշաճ ծանուցվել է, հավաստումն ուղարկելով Հանձնաժողովի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին:

1.3 2025 թվականի մայիսի 2-ին պատշաճ ծանուցված Վասակ Վարդանյանի ներկայությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ 71/2025 արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

1.4 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության մասին պատշաճ ծանուցված Վասակ Վարդանյանի ներկայությամբ 2025 թվականի մայիսի 7-ին՝ ժամը՝ 15:00-ին, տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն, որը վարույթի մասնակցի միջնորդությամբ տեղափոխվել է 2025 թվականի մայիսի 15-ին:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

Վարույթի մասնակից Վասակ Վարդանյանն արձանագրության կազմման ընթացքում ներկայացրել է պարզաբանում, որի համաձայն՝ 2019 թվականին ձեռք է բերել «Հայէկոնոմբանկ» ԲԲ ընկերության 15 հատ հասարակ անվանական բաժնետոմսեր 243,750 ՀՀ դրամով, յուրաքանչյուր բաժնետոմսի արժեքը կազմել է 16,250 ՀՀ դրամ, որից հետո բանկի խորհրդի որոշմամբ 1 բաժնետոմսը տրոհվել և հավասարեցվել է հինգ բաժնետոմսի, որի համար ինքը գումար չի վճարել և արդյունքում ունեցել է 75 հատ հասարակ անվանական բաժնետոմս: Վասակ Վարդանյանը նշել է նաև, որ 2019-2023 թվականների ընթացքում փաստացի եկամուտ չի ստացել: Միաժամանակ բանկից ստացված տվյալների համաձայն յուրաքանչյուր տարվա համար ամբողջ բաժնետոմսերի մասով հաշվեգրված եկամուտի չափը չի գերազանցել 3000 ՀՀ դրամը: Բաժնետոմսերը չհայտարարագրելու որևէ միտում չի ունեցել, պարզապես եկամուտ չստանալու փաստով պայմանավորված՝ չի հիշել բաժնետոմսերի առկայության վերաբերյալ և չի հայտարարագրել իր կողմից ներկայացված հայտարարագրերում:

III. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/116/2025 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում, որ՝

3.1 ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքում հրապարակված տվյալների (<http://kotayk.mtad.am/structure/bio/813/>), ինչպես նաև հայտարարագրված տվյալների համաձայն Վասակ Վարդանյանը 2018 թվականի հունիսի 28-ից զբաղեցնում է ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալի պաշտոնը:

3.2 Վասակ Վարդանյանը Օրենքի 34-րդ հոդվածի համաձայն հանդիսանում է հայտարարագիր ներկայացնելու պարտականություն կրող անձ:

3.3 2019 թվականի հունիսի 14-ին Վասակ Վարդանյանը ձեռք է բերել «Հայէկոնոմբանկ» ԲԲ ընկերության 15 հասարակ անվանական բաժնետոմս:

3.4 2023 թվականի փետրվարի 28-ին «Հայէկոնոմբանկ» ԲԲ ընկերության բաժնետերերի ժողովի որոշման համաձայն սովորական բաժնետոմսերը բաժանվել են 1 բաժնետոմսը = 5

բաժնետոմս համամասնությամբ, որի արդյունքում Վասակ Վարդանյանի կողմից ձեռք բերված «Հայէկոնոմբանկ» ԲԲ ընկերության 15 հասարակ անվանական բաժնետոմսերը դարձել են 75 բաժնետոմս:

3.5 «Հայէկոնոմբանկ» ԲԲ ընկերության պաշտոնական կայքում հրապարակված տվյալների համաձայն 2023 թվականին ընկերության մեկ հասարակ բաժնետոմսի շուկայական արժեքը կազմել է 5,410 ՀՀ դրամ, որի պարագայում չհայտարարագրված բաժնետոմսերի շուկայական արժեքը 2023 թվականին կազմել 405,750 ՀՀ դրամ:

3.6 Վասակ Վարդանյանն իր՝ պաշտոնատար անձի՝ 2023 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրի (այսուհետ՝ Հայտարարագիր) «Բ.3. Արժեթղթեր և բաժնային ներդրումներ» բաժնում՝ չի հայտարարագրել «Հայէկոնոմբանկ» ԲԲ ընկերության 75 հատ հասարակ անվանական բաժնետոմսեր:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի իմաստով հայտարարատու պաշտոնատար անձինք են պետական (...) պաշտոն զբաղեցնող անձինք:

4.2 Օրենքի 40-րդ հոդվածի (Գույքի հայտարարագրի բովանդակությունը) 1-ին մասի 4-րդ կետի համաձայն Հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող՝ բաժնային արժեթղթերը, այլ ներդրումը հավաստող փաստաթղթերը (բաժնետոմսը, բաժնեմասը, փայաբաժինը), ինչպես նաև պարտքային արժեթղթերը (պարտատոմսը, չեկը, մուրհակը և Հայաստանի Հանրապետության օրենքներով արժեթղթերի թվին դասվող այլ փաստաթուղթ, բացառությամբ բանկային վկայագրի) :

4.3 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում **անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ** ներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.4 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.5 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

4.6 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.7 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինն ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.8 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.9 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.10 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական

իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքով սահմանված հայտարարագրման ենթակա տվյալներին վերաբերող իրավակարգավորումներով սահմանված պահանջներն ամբողջական կերպով ներկայացված են հայտարարագրերի լրացման էլեկտրոնային համակարգում, որտեղ հայտարարատուի կողմից լրացվում են Օրենքով պահանջվող վերաբերելի տվյալները:

Առաջնորդվելով նշված որոշմամբ սահմանված հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջներով՝ Հանձնաժողովը հայտարարագրերի լրացման կարգի խախտում է որակում այն դեպքերը, երբ հայտարարագրման ենթակա տվյալը լրացվել է սխալ ենթաբաժնում: Այն դեպքում, երբ հայտարարատուի ներկայացրած տվյալին վերաբերող որևէ տվյալ չի լրացվում համապատասխան դաշտում և լրացվում է այլ ենթաբաժնում՝ հայտարարատուն թույլ է տալիս հայտարարագրի լրացման կարգի պահանջների խախտման արարք, մինչդեռ, Օրենքով պահանջվող հայտարարագրման ենթակա առանձին տվյալները չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքում՝ թույլ է տալիս ոչ ամբողջական կամ սխալ տվյալների ներկայացման արարք:

Սույն գործով ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ՝ Վասակ Սլավիկի Վարդանյանը Օրենքի 34-րդ հոդվածի համաձայն, որպես հայտարարագիր ներկայացնելու պարտականություն կրող անձ, 2024 թվականի մայիսի 30-ին Հանձնաժողով ներկայացված Հայտարարագրում անզգուշությամբ ներկայացրել է ոչ ամբողջական տվյալ, այն է՝

Հայտարարագրի «Բ.3. Արժեթղթեր և բաժնային ներդրումներ» բաժնում՝ չի հայտարարագրել «Հայէկոնոմբանկ» ԲԲ ընկերության 75 հատ հասարակ անվանական բաժնետոմսեր, որը պարտավոր էր հայտարարագրել Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 21-րդ հոդվածը սահմանել է, որ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Արարքի նվազ նշանակությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ թեև ձևականորեն արարքը կարող է պարունակել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ, սակայն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը այնպիսի էական վնաս չի պատճառվել, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը դիտարկվի համաչափ: Նվազ կարևորությունը կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել խախտման բնույթը, դրա որակական կողմը, ինչպես նաև խախտում թույլ տված անձի վերաբերմունքը խախտման նկատմամբ:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածը նպատակ է հետապնդում ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի գործունեության թափանցիկությունը և հնարավոր կոռուպցիոն դրսևորումների բացահայտումն ու դրանց նկատմամբ հանրային վերահսկողությունը:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյո՞ք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Տվյալ դեպքում Հանձնաժողովը արձանագրում է, որ Վասակ Վարդանյան Հայտարարագրի «Բ.3. Արժեթղթեր և բաժնային ներդրումներ» բաժնում՝ չի հայտարարագրել «Հայէկոնոմբանկ» ԲԲ ընկերության 75 հատ հասարակ անվանական բաժնետոմսեր:

Այս առնչությամբ Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում նշել, որ Վասակ Վարդանյանի կողմից չհայտարարագրված բաժնետոմսերը ցուցակված են, հետևաբար՝

դրանց շուկայական արժեքները հրապարակային տվյալներ են, և բաժնետոմսերի շուկայական արժեքը ոչ ձեռքբերման պահին, ոչ էլ հաշվետու ժամանակաշրջանում չի գերազանցել անձի ամսական վարձատրության դրույքաչափը, որպիսի պայմաններում չի վտանգվել պետական պաշտոն զբաղեցնող անձի գույքային դրության բացահայտումը, պետական պաշտոն զբաղեցնող անձի հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահության հնարավորությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի գործունեության թափանցիկությունը և հնարավոր կոռուպցիոն դրսևորումների բացահայտումն ու դրանց նկատմամբ հանրային վերահսկողությունը:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները, Հանձնաժողովը գտնում է, որ ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ՝ Վասակ Սլավիկի Վարդանյանի կողմից կատարված խախտումը հանրային վտանգավորության տեսակետից ունի նվազ նշանակություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասով, 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 21-րդ հոդվածով, Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վասակ Սլավիկի Վարդանյանին ազատել վարչական պատասխանատվությունից՝ հայտարարելով բանավոր դիտողություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վասակ Սլավիկի Վարդանյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

3. Որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Վասակ Սլավիկի Վարդանյանին տրամադրել եռօրյա ժամկետ՝ Հայտարարագրի համապատասխան բաժնում ուղղում կատարելու համար:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ